ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Աբովյան **07/07/2021**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 05
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 10 անդամներ:

Բացակա էին՝ Հայկ Ալեքսանյանը, Արման Գրիգորյանը, Արթուր Հարությունյանը, Էդգար Հովհաննիսյանը, Նորայր Միքայելյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Աննա Զոբանյանը, Տիգրան Ղազարյանը

Նիստը վարում էր Համայնքի ղեկավար՝ Վահագն Գևորգյանը

Նիստը արձանագրում էր Աշխատակազմի քարտուղար՝ Արուսյակ Առաքելյանը

Լսեցին
2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 07-Ի N 05 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՀԱԳՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Հաստատել 2021 թվականի հուլիսի 07-ի N 05 հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1) Աբովյան համայնքի ավագանու կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերի հաշվառման և պահպանման կարգը սահմանելու մասին.

2) Աբովյան համայնքի 2021 թվականի բյուջեի առաջին կիսամյակի եկամուտների և ծախսերի կատարողականի մասին.

3) Աբովյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի N 76-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.

4) Աբովյան քաղաքի Է. Պետրոսյան փողոցի թիվ 1/43/3 հասցեում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելուն համաձայնություն տալու մասին.

5) Աբովյան քաղաքի Արզնի խճուղու թիվ 1/14/13 հասցեում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելուն համաձայնություն տալու մասին.

6) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի ղեկավարի կողմից 2021 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված հողային հաշվեկշռին համաձայնություն տալու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 23-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՈՒՍՅԱԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ/

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասը, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետը՝ Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Սահմանել Աբովյան համայնքի ավագանու կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերի հաշվառման և պահպանման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից և տարածվում է 2021 թվականի հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 24-Լ/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Ի գիտություն ընդունել Աբովյան համայնքի 2021 թվականի բյուջեի առաջին կիսամյակի եկամուտների և ծախսերի կատարողականի մասին համայնքի ղեկավարի հաղորդումները (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 25-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 76-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածների, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Աբովյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի «2021 թվականի համար Աբովյանի համայնքային ենթակայությամբ ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 76-Ա որոշմամբ հաստատված հավելված 15-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 26-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ Է. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1/43/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՏԻԳՐԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 64-րդ կետի, հաշվի առնելով Մարիետա Մխիթարյանի դիմումը (մուտք՝ 2020 թվականի սեպտեմբերի 11-ի N Ք-1717), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2021 թվականի ապրիլի 30-ի N 1/փ-142 դրական եզրակացությունը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Համաձայնություն տալ փոփոխելու Մարիետա Մխիթարյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2018 թվականի նոյեմբերի 19-ի N 19112018-07-0047 վկայական, կադաստրային համար՝ 07-002-0048-0148) Աբովյան քաղաքի Է. Պետրոսյան փողոցի թիվ 1/43/3 հասցեում գտնվող 0.0091 հեկտար մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը որպես բնակավայրերի նշանակության հողամաս:

2. Սահմանել, որ սույն որոշումից ծագող պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Մարիետա Մխիթարյանի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մարիետա Մխիթարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 27-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՐԶՆԻ ԽՃՈՒՂՈՒ ԹԻՎ 1/14/13 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՏԻԳՐԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 64-րդ կետի, հաշվի առնելով Կարեն Թովմասյանի դիմումը (մուտք՝ 2020 թվականի սեպտեմբերի 09-ի N Ք-1684), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2021 թվականի ապրիլի 19-ի N 1/փ-133 դրական եզրակացությունը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Համաձայնություն տալ փոփոխելու Կարեն Թովմասյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2020 թվականի սեպտեմբերի 7-ի N 07092020-07-0064 վկայական, կադաստրային համար՝ 07-002-0071-0093) Աբովյան քաղաքի Արզնի խճուղու թիվ 1/14/13 հասցեում գտնվող 0.00856 հեկտար մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը որպես բնակավայրերի նշանակության հողամաս:

2. Սահմանել, որ սույն որոշումից ծագող պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Կարեն Թովմասյանի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կարեն Թովմասյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 28-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԿԱԶՄՎԱԾ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՏԻԳՐԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի N 656 որոշմամբ՝ Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի կողմից 2021 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված հողային հաշվեկշռին (կցվում է՝ ձև N 22):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 29-Ա/

Ավագանու անդամներ

ՆԻԿՈԼԱՅ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՎԱՀԵ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԲԱԲԱՅԱՆ

ԼԵՎՈՆ ԺԱՄՀԱՐՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ

ԳՈՌ ՂԱԼԵՉՅԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ՆԱՐԻՆՅԱՆ

ՍԱՐԳԻՍ ՉԱՏՅԱՆ

ԱՐՄԵՆ ՔՈՍԱԿՅԱՆ

ՆԱՐԵԿ ԳԱԼՍՏՅԱՆ

Համայնքի ղեկավար

ՎԱՀԱԳՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Արուսյակ Առաքելյանը _____